ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«20» մարտի 2019թ. N ՄՊ/101-2019
ք. Արմավիր

«ԱՐԱԳԱԾԻ Մ. ՄԵԽԱԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N25 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի պարտականությունները կատարողի 2019 թվականի մարտի 5-ի N01/07.2/3223-19 և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Իմ քայլը» դաշինք խմբակցության պատգամավոր Սոֆիա Հովսեփյանի 2019 թվականի մարտի 14-ի գրությունները.

որոշում եմ՝

1. Ուժը կորցրած ճանաչել «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2018 թվականին հոկտեմբերի 20-ի «Արագածի Մ. Մեխակյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնելու մասին» N25 արձանագրությամբ ընդունված որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՄԱՐԶՊԵՏ՝ **Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ**

Invalid signature

X

VERIFIED OCSP 3/20/2019 14:31:34 GMT+4

Signed by: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230